ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ-3

ՊԵԿ-ԳՀԾՁԲ-17/3 ծածկագրով գնումների էլեկտրոնային (ARMEPS) համակարգի միջոցով գնանշման հարցման ընթացակարգով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կարիքների համար՝ ռենտգենյան զննող սարքավորումների վերանորոգման և սպասարկման ծառայությունների ձեռքբերման գնահատող հանձնաժողովի նիստի

ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավարի 28.09.2017թ. N 111/1-Ա հրամանով ձևավորված գնահատող հանձնաժողովի նիստը տեղի ունեցավ 11.10.2017թ. ժամը 09-30-ին, ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի վարչական շենքում, ք. Երևան, Մ.Խորենացու-3,7 հասցեում:
Նիստին մասնակցում էին գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ.Արշակյանը, գնահատող հանձնաժողովի անդամներ Կ.Գևորգյանը, Գ.Եղոյանը, Մ.Մանուկյանը, Հ.Գալստյանը և քարտուղար Գ.Ղազարյանը:

Օրակարգ

Հայտերի գնահատման արդյունքները հաստատելու մասին

-ՊԵԿ-ԳՀԾՁԲ-17/3 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովը ուսումնասիրելով «Կոնսէլ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեից ստացված եզրակացությունը/կցվում է/՝ գնահատող հանձնաժողովի նախագահ Վ.Արշակյանը ներկայացրեց հանձնաժողովի անդամների կողմից իրականացված հայտերի գնահատման արդյունքները/գնահատման թերթիկները կցվում է/, որի հիման վրա հանձնաժողովը որոշեց՝
-Հաշվի առնելով, որ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի տրամադրած տեղեկատվությունը, ինչպես նաև առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված պահանջներին՝
-Առաջին տեղը զբաղեցրած «Կոնսէլ» ՍՊԸ-ին ճանաչել ընտրված մասնակից:
-Քանի որ, գնման ընթացակարգին միայն մեկ մասնակից է հայտ ներկայացրել և անգործության ժամկետը կիրառելի չէ՝ ուստի ներկայացնել առաջարկ ընտրված մասնակից «Կոնսէլ» ՍՊԸ-ին՝ պայմանագիր կնքելու համար:

Ընդունվել է որոշում՝ կողմ 5, դեմ 0:

Գնահատող հանձնաժողովի նախագահ՝ Վ.Արշակյան

Անդամներ՝ Կ.Գևորգյան

Գ.Եղոյան

Մ.Մանուկյան

Հ.Գալստյան

Քարտուղար՝ Գ.Ղազարյան